ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

**«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ**

29.06.2026թ.

# Որոշում

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 32-րդ կետի 19-րդ ենթակետը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/63» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել «Glipotech» LLC-ն: Գնահատող հանձնաժողովի կողմից «Glipotech» LLC -ի կողմից համակարգի միջոցով ներկայացրած հայտում արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես. բացակայում էր դիմում հայտարարությունը /Հավելված 1-ը/, Իրական շահառուների մասին կայքէջի հղումը /Հավելված 1.3-ը/, ապրանքի ամբողջական նկարագրում /Հավելված 1.1-ում/ բացակայում է ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը:: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում

արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Այսպիսով, «Glipotech» LLC -ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) համաձայն վերջիններիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միաժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չհամապատասխանելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/63» | 1 | վիրաբուժական գործիքներ բազմակոմպոնենտ | 29.635.000 | Glipotech LLC | 05462310 | - | 17.06.2026 | «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓԲԸ» | «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/63» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ | Առկա չէ |

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ